ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ
ՄԱՐԶԻ ՄՈՒՍԱԼԵՌԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2012Թ. 2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մուսալեռի գյուղապետարանը իր աշխատանքային գործունեությունը կազմակերպել է ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Ըստ բնագավառների իրականացվել են հետևյալ աշխատանքները

Քաղաքացիների իրավունքների պաշտպանության բնագավառում

Կատարել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առել քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները և ձեռնարկել է համապատասխան միջոցներ:

Միջոցներ է ձեռնարկել պաշտպանելու համայնքի բնակիչների ու տնտեսվարող սուբյեկտների իրավունքները և օրինական շահերը:

Նոտարական գրասենյակում, անձնագրային բաժնում, կադաստրի Վաղարշապատի տարածքային ստորաբաժանումում բազմիցս հանդես է եկել համայնքի բնակիչների օրինական շահերը պաշտպանելու նպատակով:

Հրավիրել և վարել է Մուսալեռի գյուղական համայնքի ավագանու թվով 4 նիստ:

Արձակել է 36 կարգադրություն, ընդունել է 22 որոշում: Տրվել է 1118 տնդեկանք: Ելից գրությունների թիվը կազմում է 80, մտից գրությունների թիվը՝ 100:

Ֆինանսների բնագավառում

Օրենքով սահմանված կարգով կազմակերպել է գույքահարկի՝ շինություններ 813 700 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 1 500դրամ/, փոխադրամիջոցներ 1 878 000 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 2 900 000դրամ/, հողի հարկի՝ 1 160 800 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 3050 000դրամ/, տեղական տուրքերի՝ 127 800 դրամ /1-ին կիսամյակի 422 000 դրամ/ վարձակալական հողի վճարների՝ 101 100 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 250 000 դրամ/ գանձումը: Հողի օտարումից եկամուտ է եղել 85 300 դրամ /1-ին կիսամյակի պլանային ցուցանիշը 470 000դրամ/:

Սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է դրամական օգնություն՝ 945 000 դրամ:

Թվով 2 հարկատուներ օգտվել են փոխադրամիջոցների գույքահարկի արտոնություններից: Ավտոմեքենաների գծով գեղջված գումարի չափը կազմում է 119228 դրամ::

Գյուղապետարանը աշխատավարձի գծով պարտքեր չունի:

պաշտպանության բնագավառում

Վարվում է Մուսալեռի գյուղական համայնքի զինապարտ քաղաքացիների հաշվառման գրանցամատյան:

2012 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում զորացրվել է թվով 7 զինվոր:

քաղաքաշինության և հողօգտագործման բնագավառում

Սահմանված կարգով տրվել է համայնքի վարչական սահմաններում իրականանացվող թվով 6 բնակելի տան և 1 էլեկտրական ենթակայանի շինարարության թույլտվություն:

Կատարվել է Անի թաղամասի բազմաբնակարան թիվ 1 շենքի տանիքի կապիտալ վերանորոգման աշխատանքներ:

Կատարվել է Գինեվետ և Ռաֆֆու փողոցների արտաքին լուսավորության վերանորոգման աշխատանքներ:

Անմիջական վերահսկողություն է իրականացրել համայնքի հողային ֆոնդի նպատակային օգտագործման համար:

Կազմվել է հողային հաշվեկշիռը:

կոմունալ տնտեսության և բարեկարգման բնագավառում

Վերահսկողություն է իրականացվել համայնքի տարածքում աղբահանության աշխատանքները պատշաճ մակարդակով կատարելու համար: Աղբահանությունը կատարվում է համայնքի թվով 15 փողոցներում. յուրաքանչյուր փողոցում 4 կանգառ, շաբաթական 2 անգամ: Պարբերաբար կատարվում է գյուղապետարանի, մանկապարտեզի, դպրոցի տարածքների Նաիրի փողոցի մաքրման և բարեկարգման աշխատանքներ:

Կատարվել է Գինեվետ փողոցով և Գինեվետի 1 անցուղիով 193 գծմ գազագծի անցկացում:

Հեռք է բերվել ջրամղիչ պոմպեր և տեղադրվել է Կոմիտաս, Զ. Անդրանիկ, Ա. Բաբաջանյան փողոցներում:

Ցրանց Վերֆելի փողոցի 1-ին փակուղում հիմնանորոգվել է 165գծմ խմելու ջրի ջրագիծ:

Համայնքի ղեկավարի գործունեությունը առևտրի և սպասարկման բնագավառում

Համայնքի ղեկավարի կողմից տրվել է ոգելից խմիչքների, ծխախոտի, վառելիքաքսայուղային նյութերի վաճառքի թույլտվություն:

Հանրային, կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողություն է իրականացվել:

Առողջապահության, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում

Նպաստում է համայնքում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացմանը: Դպրոցահասակ երեխաների հետ անցկացվում է ֆուտբոլի և բռնցքամարտի պարապունքներ: Պարբերաբար տարվում են ֆուտբոլի խաղահրապարակի մաքրման և պահպանման աշխատանքներ:

Կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում

Կատարվել է Մուսալեռի գյուղական համայնքի մանկապարտեզի տնօրենի սենյակի և սննդամթերքի պահեստների վերանորոգում

Գյուղատնտեսության և բնապահպանության բնագավառում

Նպաստել է ինքնակամ որոգանման կանխմանը:

Մուսալեռ համայնքի ղեկավար Է. Հովհաննիսյան

19.07.2012թ.